

Թիւ 27241
Մարտ 17, 1981

Արժանաշնորհ

Տ. Տիրան ՔԻՆ. Փափազեան
Հովիւ Ս. Գրիգոր Նարեկացի Եկեղեցւոյ
Նախազահ ծխական Խորհուրդի
Գլխավոր քահանա:

Սիրելի Տէր Տիրան,

Ասացած ենք Մարտ 11, 1981 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ ձեր նախազահութեամբ Փետրուար 22ին գումարուած համայնքիղ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի երեք անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը կը ինդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հածեցէք փութով Առաջնորդարան դրկել ծխական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց անունները, հասցէնները եւ հետաձայնի թիւերը, ինչպէս նաև համայնքիղ նորընտիր պատգամաւորին ինքնութիւնը հաստատող վկայագիրը, որուն օրինակը կը ներփակենք:

Տրուած ըլլալով որ Եկեղեցւոյդ տրատու անդամներուն թիւը 102 է, համաձայն Թեմական Կանոնադրութեան թիւ 54 յօդուածին, համայնքու իրաւունք ունի միայն մէկ պատգամաւոր ընտրելու: Այս պարագային Եկեղեցւոյդ որպէս պատգամաւոր կը հաստատենք առաւելագոյն քուէ ստացող Տիկ. ֆլորէնս Կէօքնեանը:

Օր հնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունեութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիղ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Ճորժ Սարեան
Ալէն Պորազանեան
Նաթ Արսլանեան